

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկում- ների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականու- թյունը	Միջինացված արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Բացահանք	Փոշի	Նմուշարկում, ավտոմատ չափում	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.0081մգ/մ ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Բացահանքի տարածք	Քիմիական կազմ	Դիտարկում, նմուշարկում	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	Al 29041մգ/կգ, Si 5106539մգ/կգ, P 1600մգ/կգ, Cl 985մգ/կգ, S 9059մգ/կգ, K 10114մգ/կգ, Ca 75865մգ/կգ, Ti 3442մգ/կգ, V 222մգ/կգ, Cr 138մգ/կգ, Mn 647մգ/կգ, Fe 34657մգ/կգ, Co

¹Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՍԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

					<p><5մգ/կգ, Ni 97մգ/կգ, Cu 55մգ/կգ, Zn 75մգ/կգ, As 12մգ/կգ, Se <5մգ/կգ, Rb 51մգ/կգ, Sr 454մգ/կգ, Y 19մգ/կգ, Zr 144 մգ/կգ, Nb 8 մգ/կգ, Mo 194 մգ/կգ, Ag <5 մգ/կգ, Cd <5 մգ/կգ, Sn <5 մգ/կգ, Sb <5մգ/կգ, W <5մգ/կգ, Pb 13մգ/կգ, Bi <5 մգ/կգ, Th <5 մգ/կգ, U<5 մգ/կգ, LE 726569մգ/կգ:</p>
<p>Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ</p>	<p>Հանքավայրի տարածք</p>	<p>ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ</p>	<p>Դիտարկում դաշտային պայմաններում</p>	<p>2022 թվականի ընթացքում մեկ անգամ</p>	<p>Բացահանքի հարակից տարածքներում դիտարկվել են Artemisia Fragrans Willd., Kochia Prostrata (L.) Schrad.,</p>

					<p> Capparis spinosa Willd., Ceratoides papposa Botsch. Et Ikonn., Atraphaxis spinosa L., Rhamnus pallasii Fisch. Et Mey., Tanacetum argyrophyllum (C.Koch) Tzvel., Poa bulbosa L. Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum, Aeluropus littoralis (Gouan) Parl.: ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված, էնդեմիկ տեսակներ չեն դիտարկվել: Խոշոր կենդա- նիների որջեր, բնադրավայրեր </p>
--	--	--	--	--	---

					չեն դիտարկվել :
Աղմուկ	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան				
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպոր- տային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հանքավայրի տեղադիրքը. Արամուսի բազալտների հանքավայրի «Բազալտ» տեղամասը վարչական առումով գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում և տեղակայված է Կամարիս գյուղի հարևանությամբ: Մոտակա երկաթուղային՝ Աբովյան կայարանը գտնվում է օբյեկտից մոտ 6կմ հյուսիս-արևմուտք:

Երկրաբանական կառուցվածքը. Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից առաջացումները, բազալտները և պեմզային ավազները:

Երկրաբանական կտրվածքը վերնիցներքև ներկայացված է հետևյալ տեսքով.

Չորրորդական առաջացումներ – տեղամասում ներկայացված են այլուվիալ-դելյուվիալ առաջացումներով, տարբեր ապարների տարաչափ բեկորներով, ավազի և խճի խառնուրդով: Ունենոչ մեծ հզորություն մինչև 1,4մ (պաշարների հաշվարկման եզրագծերում):

Դոլերիտային օլիվինային բազալտներ – տեղադրված են ժամանակակից առաջացումների տակ, հետախուզման սահմաններում ունեն 1,5-9,8մ հզորություն, մոխրավուն գույն: Ճեղքերը հիմնականում լցված են կավային նյութով: Ճեղքերի հզորությունը տեղ-տեղ հասնում է 10սմ-ի, միմյանց միջև հեռավորությունը՝ 4,0մ է:

Մակրոսկոպիկ բազալտներն իրենցից ներկայացնում են մանրահատիկ, ծակոտկեն, թույլ ճեղքավորված բաց մոխրագույն ապարներ: Ըստ խորության բազալտները ձեռք են բերում կապտավուն երանգ, ինչը պայմանավորված է դրանցում առկա պլագիոկլազի առկայությամբ:

Պեմզային ավազներ – սրանք հանդիսանում են բազալտների ստորադիր ապարները, որոնք տարածականորեն բավականին կտրուկ (մինչև 200մ հեռավորության վրա) սեպանում են և վերածվում այլ հրաբխաբեկորային ապարների: Պեմզային ավազների հզորությունը 2-4մ է:

«Բազալտ» տեղամասի բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշվել են թվով 8 մենաքարերի փորձարկումների տվյալներով: Բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունների ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Հ/հ	Ցուցանիշների անվանումը	Մեծությունը		
		Նվազ.	Առավել.	Միջին
1	2	3	4	5
1	Ծավալային կշիռը, կգ/մ ³	2689	2740	2716
2	Տեսակարար կշիռը, գ/սմ ³	2.87	2.90	2.89
3	Ծակոտկենությունը, %	5.19	6.97	5.97
4	Ջրակլանումը, %	0.58	0.17	0.81
5	Ամրությունը, կգ/սմ ²			
	չոր վիճակում	888	1078	964
	ջրահագեցված վիճակում	723	810	755
	25 ցիկլ սառեցումից հետո	586	680	620
6	Մաշելիությունը, գ/սմ ²	0.87	0.95	0.90
7	Փափկեցման գործակիցը	0.78	0.80	0.79
8	Սառնակայունության գործակիցը	0.81	0.84	0.82

Ռեադիոմետրիկ չափումների տվյալներով տեղամասի օգտակար հանածոյի գումարային տեսակարար առավելագույն ճառագայթային ակտիվությունը կամում է 18,3Սկո/ժամ, ինչը համապատասխանում է ՆՌԲ-96 նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Հետևապես կարող են օգտագործվել շինարարական աշխատանքներում առանց սահմանափակման:

Հանքավայրի պաշարները վերահաստատվել են 10.06.2016թ-ի ՀՀ ԷԲՊ նախարարության ՕՀՊԳ-ի թիվ 5 եզրակացությամբ հետևյալ կարգով և քանակով.

Աղյուսակ 2.

Պաշարի կարգը	Պաշարը, հազ. մ ³	Օգտագործման ոլորտը	Մասնաբաժինը		
			Ելքը, %	Քանակը	
				%	Հազ. մ ³
B կարգ	95.2	Բլոկայի նարտադրատեսակներ այդ թվում՝	29.6	--	28.2
		- Երեսապատման քար	22.2	--	21.1
		- շինաքար	7.4	--	7.1
		Շինարարական խիճ	--	70.4	67.0

Հանքավայրի շահագործման լեռնատեխնիկական պայմանները.

Օգտակար հանածոյի կազմաբանությունը և հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները թույլ են տալիս դրա մշակումը շարունակել բաց լեռնային աշխատանքներով: Բազալտների միջին հզորությունը վերցվում է

ա/ 1-Յ բլոկի համար 5.12մ, մակաբացման ապարները 2.85մ, այդ թվում 2.0մ բերվածքային ապարներ, 0.85մ հողմահարված բազալտներ /փուշտա/:

բ/ 2-Յ բլոկի համար 1.82մ, մակաբացման ապարները 5.0մ, այդ թվում 3.5մ բերվածքային ապարներ, 1.5մ հողմահարված բազալտներ /փուշտա/:

Բազալտների արդյունահանումը նախատեսվում է իրականացնել հորատասեպային եղանակով, 5.0մ բարձրությամբ աստիճաններով /որը կարող է բաժանվել 2.5մ բարձրության ենթաստիճանների/: Վերջնական եզրագծում աստիճանները մարվողերկու աստիճանների միջև թողնվում է 2,0մ լայնությամբ բերմա: Նշված պայմաններով կառուցված բացահանքն ունի հետևյալ պարամետրերը՝

1-Յ բլոկ

- առավելագույն երկարությունը – 105մ;
- առավելագույն լայնությունը – 95մ;
- մշակման առավելագույն խորությունը – 17մ;
- օտարման մակերեսը – 0.98հա:

2-Յ բլոկ

- առավելագույն երկարությունը – 300մ;
- առավելագույն լայնությունը – 120մ;
- մշակման առավելագույն խորությունը – 30մ;
- օտարման մակերեսը – 2.55հա:

Ըստ տեխնիկական առաջադրանքի հանքավայրի շահագործման տարեկան արտադրողականությունը ընդունված է 3500մ³/տարի արդյունահանվող պաշար:

Արդյունահանման աշխատանքներն իրականացվում են շուրջտարյա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը տարում ընդունված է 260 օր, շաբաթվա

աշխատանքային օրերի թիվը – 5, հերթափոխի թիվը օրում -1, հերթափոխի տևողությունը - 8 ժամ:

Հանքավայրը փաստացի շահագործվում է և բացահանքի բացման աշխատանքներ որպես այդպիսին չեն իրականացվում: Շահագործմանը զուգընթաց իրականացվում է 2-B բլոկի 1600մ նիշ ունեցող հորիզոնի բացում՝ լեռնային աշխատանքների հետագա նորմալ կազմակերպման համար:

Ներկայումս արդյունահանման աշխատանքներն իրականացվում են նշված բլոկի հարավային հատվածում 1573-1594մ նիշերի միջև, որոնց հետագա զարգացումը կխոչնդոտի բացահանքի բնականոն շահագործմանը:

Բացահանքերի եզրագծում մակաբացման ապարները (2.85-5.0մ) ներկայացված են 2.0-3.5մ հզորությամբ փխրուն-բեկորային բերվածքային ապարներով և 0.85-1.5մ հողմնահարված բազալտներով՝ համապատասխանաբար 109730մ³ և 44770մ³:

Մակաբացման ապարների (24.23մ³/հերթ) հեռացումը կատարվում է բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրասպորտային համալիրի օգնությամբ: Բերվածքային ապարները և հողմնահարված բազալտները տեղափոխվում են ներքին և ժամանակավոր ձևավորվող արտաքին լցակույտեր:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից, հանքաշերտի մշակման ժամանակ ընդունվում է ընդլայնական, միակողմանի, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարները ներքին հիմնական և մասամբ արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխմամբ:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

- Աշխատանքային աստիճանի բարձրությունը – մինչև 5.0մ,
- Ենթաստիճանի բարձրությունը – 2.5մ
- Աշխատանքային աստիճանի թեքությունը – 900,
- Մարված մակաբացման աստիճանի թեքությունը – 450,
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20մ:
- Մարված 2 աստիճանների մեջթողնվում է 2մ լայնությամբ բերմա:

Շահագործման ընթացքում սկզբից արդյունահանվում են 2-Յ բլոկի պաշարները, որից հետո 1-Յ բլոկի պաշարները: Արդյունահանման աշխատանքները բաղկացած են հետևյալ գործողություններից.

- Միաքարի անջատումը զանգվածից,
- Միաքարի հեռացումը հանքախորշից մինչև մասնատման վայրը,
- Միաքարի մասնատումը բլոկների.
- Բլոկների կոպտամշակումը
- Շինարարական քարի ստացումը և բարձումը,
- Արտադրական թափոնների հեռացումը:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած խճի հումքը 2464մ^3 տարեկան կամ $9.48\text{մ}^3/\text{հերթ}$ ծավալով, աշխատանքային հորիզոնում $\Delta 3-170.01$ մակնիշի բուլդոզերով տեղափոխվում և կուտակվում են հանքախորշից 10-15մ հեռավորության վրա, այնուհետև կուտակված թափոնները տեղում առկա Воронеж-5124 մակնիշի միաշերտի էքսկավատորով բարձվում են KpA3-256B մակնիշի ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում ՋՏկայանք բազալտե խճի արտադրության համար:

Բացահանքում բուլդոզերային աշխատանքներն են միաքարի հեռացումը հանքախորշից, խճի հումքի, մակաբացման ապարների տեղափոխումը և կուտակումը և մակաբացման ապարների տեղափոխումը լցակույտերում: Դրանց հերթափոխային ծավալները համապատասխանաբար կազմում են 3.98մ^3 , 9.48մ^3 , 24.23մ^3 և 24.23մ^3 :

Կուտակված խճի հումքի, փուշտա շերտի և ժամանակակից առաջացումների ապարների բարձումը KpA3-256B ավտոինքնաթափի մեջ կատարվում է Воронеж-5124 էքսկավատորով: Ծավալների փոքրության հետևանքով մեկ էքսկավատորը լիովին բավարար է:

Մեղմած օդի հիմնական սպառիչներ են հանդիսանում 2 հատ հորատման մուրճերը $3.0\text{մ}^3/\text{րոպե}$ ծախսով և 2 հատ MO-2 մակնիշի հարվածապոկիչ մուրճերը $1.15\text{մ}^3/\text{րոպե}$ ծախսով:

Բացահանքերի լցակույտ առաջացնող ապարները ընդամենը 154500մ^3 ծավալով ներկայացված են բերվածքային ապարներով - 109730մ^3 , և փուշտաշերտով - 44770մ^3 :

2-B բլոկի բացահանքի մինչև 1580մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը մակաբացման ապարները 83080մ³ ծավալով տեղավորվում են նշված բացահանքի հարավ-արևմտյան մասում գտնվող մշակված տարածությունում (այն դուրս է հաստատված պաշարների եզրագծից) - 66630մ³ և 1-B բլոկի բացահանքի հարավային մասում ձևավորվող ժամանակավոր արտաքին լցակույտում - 16450մ³:

2-B բլոկի բացահանքի 1580մ նիշ ունեցող հորիզոնից ներքև, ինչպես նաև ամբողջ 1-B բլոկի բացահանքի շահագործումից առաջացող մակաբացման ապարները կուտակվում են ներքին ներբացահանքային լցակույտերում:

2-B բլոկի բացահանքի 1580մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանն զուգընթաց ժամանակավոր արտաքին լցակույտի ապարները տեղափոխվում են ներբացահանքային տարածք և հարթեցվում:

Բազալտի տեղափոխումը մինչև գոյություն ունեցող վերամշակման արտադրամաս (տեղափոխման հեռավորությունը մինչև 5կմ), իսկ բերվածքային ապարների և «փուշտա» շերտի ապարների տեղափոխումը լցակույտ (առավելագույնը 500մ) կատարվում է 12,0տ բեռնատարողությամբ ավտոինքնաթափերի միջոցով:

Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդները, բանեցված շարժիչների յուղերը, ինչպես նաև բանեցված դողածածկերը առաջանում են բացահանքի ավտոպարկի (բուլդոզեր, էքսկավատոր, ավտոկռունկ, ավտոինքնաթափ, բեռնամարդատար ավտոմեքենա) և տեխնիկական սարքավորումների (հորատող մուրճ, կոմպրեսորային կայանք, հարվածապոկիչ մուրճ) շահագործման, ընթացիկ տեխնիկական զննման և սպասարկման ընթացքում:

Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.

Արամուսի բազալտների հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասը լեռնագրական տեսակետից տեղամասի տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի արևելյան եզրամասում տարածված Կոտայքի հրաբխային սարավանդին, որը հյուսիս-արևելքում եզրավորվում է Գեղամա լեռներով (լ. Աժդահակ, 3598մ) և Ողջաբերդի լեռնաբազուկով,

հյուսիսում՝ Հատիս (2528մ) և Գութանասար (2299մ) լեռնազանգվածներով, իսկ հարավում՝ Նորքի սարավանդով:

Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարահարթը բլրային ռելիեֆով տարածք է՝ կտրտված բազմաթիվ ձորակներով և սարավանդային խոր գետահովիտներով: Սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները: Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Տեղ-տեղ բաժրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ:

Արևմուտքից՝ Պտղնի գյուղի մոտակայքից անցնում է բազալտներով և տուֆերով կազմված բլրակների մի շղթա: Նմանատիպ բլրակների շղթա է ձգվում Արամուս գյուղի շրջանում հարավ-արևելյան ուղղությամբ: Ուսումնասիրվող շրջանի բացարձակ նիշերը տատանվում են 1400մ-ից մինչև 2000մ:

Լեռնազանգվածների թեք ու անտառազուրկ լանջերը կտրտված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Հարավ-արևմտյան տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.4g կամ 400սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Մողանքային մարմիններ երևակման կամ հարակից տարածքում չի արձանագրվել:

Կլիմայական տեսակետից Արամուսի բազալտի հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասի շրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ: Երևակման շրջանի օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմել է - 23°C, իսկ առավելագույնը՝ +36°C, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ +8.7°C: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 534 մմ: Չյան ծածկույթի միջին հաստությունը

հասնում է 15-30սմ: Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հարավից, տարեկան միջին արագությունը 1.7մ/վրկ:

Տեղամասում մակերևութային լրային հոսքեր չկան:

Արամուսի բազալտի հանքավայրի շրջանում զարգացած են հիմնականում լեռնաշագանակագույն հողերը:

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Տեղամասի սահմաններում տարածված բաց-շագանակագույն մանրախճաքարքարոտ կարբոնատային-ցեմենտացված հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Հողերի ծավալային զանգվածը 1.35գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.13գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 36.4%, խոնավությունը՝ 27%-ի սահմաններում: Հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 17.4%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները:

Ընդհանուր առմամբ բուն Արամուսի հանքավայրի և դրա տեղամասերի շահագործման արդյունքում ձևավորվել է տեխնածին, ընդերքօգտագործման աշխատաքներով խախտված,

արտադրական հրապարակներով, լցակույտերով և ներհանքային ճանապարհներով զբաղեցրած լանդշաֆտ:

Արամուսի բազալտի հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բնապահպանական միջոցառումների բնութագիր. Տեղամասի տարածքում նավթամթերքների, բանեցված յուղերի, քսայուղերի կուտակման/պահեստավորման բացառում :

a. Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

b. Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

c. Փոշենաստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :

d. Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով: Արտաքնոցի հորում կուտակված նյութի պարբերական տրոհում կենսասակտիվ մանրէաբանական նյութերի կիրառմամբ: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով :

e. Հանքի խախտված տարածքների ռեկուլտիվացիա :

f. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, կկազմվի հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կնկարագրվեն բացահանքի, ենթակառուցվածքների, արտադրական հրապարակի և ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

g. Ընդերքօգտագործման թափոնների կառավարում և վերամշակում :

h. Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում : Ընթացակարգն ուղղված կլինի հողային աշխատանքների ընթացքում բացահայտվելիք բոլոր գտածոներին՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

i. Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:

յ. Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

կ. Շրջակա միջավայրի մշտադիտարկում: Մշտադիտարկման կետերի տեղադիրքերը ներկայացված են նկար 1-ում :

Նկար 1.

